

Մ.Է.ՆԻԿՈՅԱՆ

ՊԱՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ  
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
*(Ուսումնամեթոդական ձեռնարկ)*

ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2015

ՀՏԴ 796.332 (07)

ԳՄԴ 75.578 ց7

Ն 700

*Երաշխավորվել է հրատարակման  
ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ*

**ԳՐԱՆՈՍՆԵՐ՝**

- Ֆ.Գ. Ղազարյան** - ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր
- Ա.Ա.Գրիգորյան** - ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, պրոֆեսոր
- Հ.Լ.Քեհեյան** - ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, ՀՀ վաստակավոր մարզիչ

Նիկոյան Մուշեղ Էդուարդի  
Ն 700 Պատանի ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները: Ուս. ձեռնարկ/ Մ.Է.Նիկոյան.-Եր.: Հեղ. հրատ., 2014.- 112 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկն իր տեսակի մեջ յուրահատուկ է, քանի որ պարզաբանվել է մարզման ժամանակակից մեթոդների կիրառման առանձնահատկությունները կապված պատանի ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության հետ:

Աշխատանքում օգտագործված են հեղինակի բազմամյա մարզչական փորձի և գիտահետազոտական աշխատանքների տվյալները:

Այն նախատեսված է մանկապատանեկան մարզադպրոցներում և ֆուտբոլային ակումբներում աշխատող մարզիչների, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ֆուտբոլով մասնագիտացող բակալավրիատի, մագիստրատուրայի ուսանողների և հայցորդների համար:

ՀՏԴ 796.332 (07)

ԳՄԴ 75.578 ց7

ISBN 978-9939-0-1291-9

© Նիկոյան Մ. Է., 2014

## ՆԱԽԱԲԱՆ

Ամբողջ աշխարհում ֆուտբոլը վայելում է բացառիկ մասսայականություն: Այս մարզաձևն անշեղորեն զարգանում է, կատարելագործվում են խաղի տակտիկան ու մեթոդները, բարդանում է մարզիկների շարժողական գործունեությունը:

Ֆուտբոլիստների խաղային գործունեությունը մշտապես փոփոխվող առավելագույնից մինչև չափավոր լարվածությամբ, գնդակով գործողություններով, մրցակցի հակադեցությամբ և այլ խանգարող գործոններով, չկարգավորված «հանգստով» փոփոխական բնույթի դինամիկ աշխատանք է: Հետևապես ֆուտբոլային խաղի յուրահատկությունը պայմանավորված է խաղային գործունեությամբ հաջողությունն ապահովող համապատասխան մանկավարժական միջոցների, մեթոդների, մոտեցումների կիրառման անհրաժեշտությամբ:

Այսօր ֆուտբոլի տեսության և մեթոդիկայի բնագավառում պաշտպանվել են ավելի քան 300 ատենախոսական աշխատանքներ: Բայց և այնպես ֆուտբոլի վերաբերյալ գիտական գրականության և ուսումնական ծրագրերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պատրաստության բազմամյա գործընթացում շարժողական ընդունակությունների մշակմանն ուղղված մարզման կառուցվածքը լուսաբանված է ոչ կոնկրետ, իսկ հաճախ հակասական: Ավելին, գիտամեթոդական գրականությունում սակավաթիվ են տեղեկությունները տարբեր տարիքի ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստվածության դինամիկայի փոփոխությունների և առավել ևս մարզիկների առաջատար շարժողական ընդունակությունների վերաբերյալ:

Ֆիզիկական պատրաստության գործընթացի հաջող  
ղեկավարման համար անհրաժեշտ է ի հայտ բերել ֆուտբոլ-  
լիստների առավել ինֆորմատիվ և առաջատար շարժողա-  
կան ընդունակությունները և մշակել դրանց կատարելագործ-  
ման մանկավարժական ուղիները: Մանկապատանեկան  
ֆուտբոլը համարվում է բավականին արդիական և կարիք  
ունի հետագա կատարելագործման:

Հենց դրանում է կայանում տվյալ ուսումնամեթոդական  
ծեռնարկի իմաստը, ուր պարզաբանվել են պատանի ֆուտ-  
բոլիստների ֆիզիկական պատրաստության առանձնահատ-  
կությունները:

## ԳԼՈՒԽ 1

### ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՈՒՏԲՈՒԼՄ

Այսօր ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստությանն անհրաժեշտ է դիտել երկու տեսանկյունով, առաջին՝ ֆիզիկական պատրաստությունն որպես սպորտային կատարելագործման հիմք, և երկրորդ՝ ֆիզիկական պատրաստության հիմնահարցերն որպես ուսումնասիրման հիմք:

#### ***1.1. Ֆիզիկական պատրաստությունը՝ որպես սպորտային կատարելագործման հիմք***

«Պատրաստություն» տերմինը լայնորեն օգտագործվում է առօրյա կյանքում, տարբեր գիտության ոլորտներում, կրթության համակարգում, այդ թվում նաև ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման բնագավառներում: Պատրաստությունը կրթության, դաստիարակության և ուսուցման հետ կազմում է մանկավարժական գործընթացի էությունը: Որպես մարդու դաստիարակության և ուսուցման նպատակաուղղված գործընթաց՝ պատրաստությունն արտացոլվում է սպորտային մարզման կողմերում, որն էլ առաջատար բաժին է հանդիսանում ֆիզիկական պատրաստության գործընթացում:

Տարբեր մարզաձևերում մարզիկների ֆիզիկական պատրաստությունը համարվում է կարևոր կողմ կամ բաժին (Н.Г.Озолин, 1949, Л.П.Матвеев, 1977, А.А.Тер-Оганесян, 1967, Н.В.Платонов, 1987, Э.А.Овакимян, 1975, Ֆ.Գ.Ղազարյան, 1993, Ա.Ա.Գրիգորյան, 2009 և այլք): Այն ուղղված է շարժողական և ֆունկցիոնալ բազայի ստեղծմանը՝ մարզիկների տեխնիկական, տակտիկական, հոգեբանական և այլ կողմերի պատրաստության համար:

Կոնկրետ իր ուղղվածությամբ ֆիզիկական պատրաստությունը՝ դա մարդու շարժողական ընդունակությունների մշակման գործընթացն է: Ունենալով նման կիրառական նշանակություն, ֆիզիկական պատրաստությունը սերտորեն կապված է նաև առողջության ամրապնդման և օրգանիզմի ֆիզիոլոգիական հնարավորությունների բարձրացման հետ:

Մարզական պրակտիկայում ֆիզիկական պատրաստությունն անմիջականորեն ուղղված է մշակելու բոլոր առաջատար և օժանդակ շարժողական ընդունակությունների մշակմանը:

Տարբեր մարզածներում առանձնացվում են ֆիզիկական պատրաստության երկու կողմ՝ ընդհանուր և հատուկ (Д.Харпе, 1971, Л.П.Матвеев, 1977, Ս.Գ.Տիգրանյան, 2007, Ս.Ս.Հակոբյան, 2009, Ս.Ս.Նահապետյան, 1988, Ю.М.Портов, 1997):

Ընդհանուր ֆիզիկական պատրաստության հիմնական խնդիրներն են՝ բոլոր շարժողական ընդունակությունների մշակումն անկախ ընտրված մարզածևից և ընդհանուր աշխատունակության բարձրացումը: Հանրահայտ է, որ ընդհանուր ֆիզիկական պատրաստությունը հանդիսանում է հատուկ ֆիզիկական պատրաստության հիմքը:

Ընդհանուր ֆիզիկական պատրաստությունը տարբեր մարզածներում, այդ թվում և ֆուտբոլում, պահպանում է ընդհանուր գծեր: Օրինակ՝ վազքը հիանալի միջոց է ընդհանուր դիմացկունության, ծանրածոդով վարժությունները՝ ուժային ընդունակությունների մշակման համար և այլն:

Հատուկ ֆիզիկական պատրաստության հիմնական խնդիրներն են օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացումը և առաջատար շարժողական ընդունակությունների նպատակաուղղված մշակումը ընտրված մարզածնում: Այս խնդիրների լուծումը կապվում է տեխնիկական,

տակտիկական, կամային և այլ խնդիրների իրագործման հետ: Հատուկ ֆիզիկական պատրաստության միջոցներն ավելի նեղ են ու մասնագիտացված:

Առաջին հարցը վերաբերում է շարժողական ընդունակությունների դասակարգմանը:

Հայտնի է, որ գիտամեթոդական գրականության մեջ դասակարգվում են հինգ հիմնական շարժողական ընդունակություններ՝ մկանային ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն և ճկունություն: Սակայն սպորտային պրակտիկայում մասնագետները գտնում են, որ գոյություն ունի շարժողական ընդունակությունների ավելի մեծ թիվ:

Ներկայումս աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեն դասակարգումներ, որոնք բովանդակում են 5-ից մինչև 20 և ավելի շարժողական ընդունակություններ: Այս հիմնախնդրի խորը վերլուծության հիման վրա հայրենական գրականության մեջ առաջին անգամ առաջարկվել է մի դասակարգում, կազմված 11 շարժողական ընդունակություններից (Ֆ.Գ.Ղազարյան, 1993): Հեղինակն այստեղ առանձնացրել է հինգ առավել (մկանային ուժ, արագաշարժություն, ճարպկություն, դիմացկունություն և ճկունություն) և վեց ոչ առավել (կոորդինացիա, ցատկունակություն, հավասարակշռություն, ճշգրտություն, ռիթմայնություն և մկանների թուլացում) շարժողական ընդունակություններ:

Երկրորդ հարցը վերաբերում է նրան, որ շարժողական ընդունակությունները չեն կարող դրսևորվել այսպես կոչված «մաքուր» ձևով, ինչը բացահայտվել է դեռևս անցյալ դարի 60-ական թթ. (В.М.Зачиорский, 1966): Նրանցից յուրաքանչյուրը գատվում է դրսևորման համեմատաբար ինքնուրույն տարատեսակների: Հետագայում սկսեցին տարբերել ընդհանուր և հատուկ դիմացկունություն: Ավելի ուշ այդ նույն հա-

տուկ դիմացկունության մեջ զատեցին ուժային, արագային և այլ դրսևորումներ:

1930-ական թթ. մասնագետները տարբերում էին միայն ընդհանուր և հատուկ ուժ, իսկ այսօր կան դրանց դրսևորման այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ պայթուցիկ ուժը, բացարձակ ուժը, հարաբերական ուժը և այլն:

Այսօր համաշխարհային գրականության մեջ պարզաբանվել են շարժողական ընդունակությունների մշակման բազմաթիվ տեսություններ ու մեթոդներ (В.М.Зациорский, 1966, Ֆ.Գ.Ղազարյան, 1992, В.К.Бальсевич, 2000, Ст.Челиковски, 1978, J.P.Guilford, 1958 և այլք): Ապացուցված է, որ բոլոր շարժողական ընդունակությունները ենթակա են մշակման: Սակայն դրանցից մի քանիսը, օրինակ՝ ձկունությունը, շատ հեշտ է մշակել, իսկ մյուսները, օրինակ՝ արագաշարժությունը, պահանջում է երկարատև մարզում: Բացի այդ, որոշ շարժողական ընդունակություններ զարգանում են ավելի շատ (օրինակ՝ մկանային ուժը, դիմացկունությունը), մյուսները՝ ավելի պակաս՝ ճարպկությունը (В.М.Зациорский, 1966, Ֆ.Գ.Ղազարյան, 1992):

Նշելով պատանի ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության կարևորությունը և հաշվի առնելով, որ տվյալ գործընթացի հիմքում ընկած է տարբեր շարժողական ընդունակությունների մշակումը, ինչպես նաև հիմնվելով գոյություն ունեցող գրական աղբյուրների վրա՝ մենք անհրաժեշտ ենք համարել գոնե շատ հակիրճ նկարագրել վերջինը:

***Ուժային ընդունակություններ:*** Գրականության մեջ ուժն ընդունված է սահմանել որպես մկանային ճիգերի միջոցով արտաքին դիմադրությունը հաղթահարելու ընդունակություն: Խաղային գործունեության ընթացքում հատկապես կարևոր նշանակություն են ստանում այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են պայթուցիկ ուժը, արագային ուժը, արագաուժային ըն-

դունակությունները: Նշված դրսևորումները հատկապես կարևոր են ցատկերի, գնդակին հարվածների, նետման, փոխանցման և այլնի դեպքում:

Սկանային ուժ մշակելու համար օգտագործվում են ուժային այնպիսի վարժություններ, որոնք միմյանցից տարբերվում են մկանային աշխատանքի ռեժիմով (ստատիկ, դինամիկ, խառը), դիմադրության բնույթով և ընտրովի ազդեցությամբ: Բոլոր ուժային վարժությունները, ելնելով մարզման խնդիրներից, կատարվում են առավելագույն, կրկնողական և դինամիկ ճիգերի մեթոդով:

**Արագաուժային ընդունակություններ:** Արագային ընդունակությունները կան արագաշարժությունը ֆուտբոլիստների առաջատար շարժողական ընդունակություններից մեկն է: Արագաշարժությունը՝ այն կարողությունն է, որը նյարդամկանային ճիգերի միջոցով ապահովում է շարժողական գործողության կատարումը ժամանակի ամենակարճ հատվածում: Բազմաթիվ շարժողական գործողությունների կատարումը, բնականաբար, զուգակցվում է արագաշարժության հետ: Այլ կերպ, ֆուտբոլում դրանք պետք է կատարվեն շատ արագ, ժամանակի սակավության պայմաններում: Այս կտրվածքով հարկ է տարանջատել շարժումների հաճախականությունը, առանձին շարժումների արագությունը (օրինակ՝ ցատկեր, հարվածներ գնդակին և այլն), շարժողական ռեակցիայի տևողությունը, շարժումների տեմպը: Արագային ընդունակությունների մշակման հիմնական մեթոդն է համարվում վարժությունների կրկնությունը:

**Դիմացկունություն:** Ֆուտբոլիստների առաջատար շարժողական ընդունակություններից մեկն է և ըստ էության այն համարվում է բազային: Մարզական պրակտիկայում տարբերում են նրա առանձին դրսևորումները՝ ուժային, արագային, ընդհանուր, ստատիկ և այլն: Ուստի դիմացկու-

նությունը բնորոշում են որպես մարդու ընդունակություն, երբ մասնագիտացված աշխատանքը կատարվում է երկար ժամանակի ընթացքում՝ առանց իջեցնելու նրա արդյունավետությունը: Դիմացկունության դրսևորման հատուկ ձևերը բնութագրվում են հարմարվողականության տարբեր պրոցեսներով, որոնք կախված են ֆիզիկական բեռնվածության առանձնահատկությունից:

**Ճկունություն:** Ճկունությունը հողերում մարմնի առանձին օղակների՝ մեծ ամպլիտուդայով շարժումներ կատարելու կարողությունն է: Տարբերում են ճկունության մի քանի տեսակ, ֆուտբոլում առավել կարևորվում է դինամիկը: Այն բնորոշվում է որոշակի շարժման սահմանային ամպլիտուդան բազմապատիկ անգամ կատարելու կարողությամբ, օրինակ՝ կատարել իրանի առաջ թեքումներ՝ առանց փոքրացնելու ամպլիտուդան: Ճկունության մշակման հիմնական մեթոդը կրկնողականն է:

**Ճարպկություն:** Ճարպկությունը համալիր շարժողական ընդունակություն է: Դա մարզիկի կարողությունն է՝ շատ արագ ու ճիշտ լուծելու տարբեր շարժողական խնդիրներ փոփոխվող պայմաններում: Ուստի այն պետք է լինի արագաշարժ, ուժեղ, հնարամիտ, կոորդինացված, ճշգրիտ: Այս տեսակետից ճարպկությունը մեծ նշանակություն ունի հատկապես խաղային մարզաձևերում, մասնավորապես՝ ֆուտբոլում: Ճարպկության մշակման միջոցներից են մրցակցականին մոտ վարժությունները՝ նրանցից որոշ ձևավորումով և որոշակի մեթոդական հնարքների օգտագործումով: Դրանց թվին կարելի է դասել անսովոր ելման դրություններից վարժությունների կատարումը, հայելաձև գործողությունների իրագործումը, տեղաշարժման արագության փոփոխումը և այլն, ու այս բոլորը՝ կրկնողական մեթոդով:

Շարժողական ընդունակությունների դրսևորումը պայմանավորված է մի շարք կենսամեխանիկական, կազմաբանական, ֆիզիոլոգիական և հոգեբանական գործոններով, որոնք, որպես կանոն, պետք է հաշվի առնվեն ֆիզիկական պատրաստվածության գործընթացում:

## ***1.2. Ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները ֆուտբոլում***

Հայտնի է, որ ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստությունը կարևոր գործոններից մեկն է, որից կախված է թիմային, խմբային և անհատական տեխնիկատակտիկական գործողությունների ակտիվությունն ու արդյունավետությունը:

Որոշակի պայմաններում լավ ֆիզիկական պատրաստությունը կարող է լրացնել տեխնիկական վարպետության թերությունները: Ֆիզիկապես լավ պատրաստված ֆուտբոլիստներն ունեն ավելի կայուն հոգեկան կառուցվածք, ընդունակ են հաղթահարել հոգեկան լարվածությունը:

Ֆուտբոլում ֆիզիկական պատրաստությունը կազմված է երկու համարժեք բաղադրիչներից՝ ընդհանուր և հատուկ: Ընդհանուր ֆիզիկական պատրաստությունն ուղղված է հիմնական շարժողական ընդունակությունների մշակմանը, հիմնական շարժողական հնարքների ծավալի մեծացմանն ու կատարելագործմանը: Այստեղ հիմնական խնդիրը ընդհանուր շարժողական պատրաստվածության ստեղծումն է, որն էլ հանդիսանում է հատուկ ֆիզիկական պատրաստության հիմքը:

Ֆուտբոլում հատուկ ֆիզիկական պատրաստությունը նույնպես մարզիկների առաջատար շարժողական ընդունակությունների և ֆունկցիոնալ հնարավորությունների նպատակաուղղված մշակման գործընթաց է: Ֆիզիկական պատ-

րաստության այս կողմի խնդիրներն են խաղային հնարքների տեխնիկայի տիրապետումը, տակտիկական գործողությունների արդյունավետության բարձրացումը, ֆուտբոլիստների հոգեբանական պատրաստվածության կատարելագործումը (Հ.Հ.Նարինջյան, 1972, Ս.Ս.Հակոբյան, Ա.Ա.Չատինյան, 2004, Մ.Ա.Годик, 2006, Э.А.Кубеков с соавт., 2007 և այլք):

Ֆուտբոլում ֆիզիկական պատրաստության կարևորության մասին է վկայում այն փաստը, որ մարզման տարեկան պլանավորման մեջ դրա չափաբաժինը կազմում է 45%, որն ակներևորեն ավելի է, քան պատրաստության մյուս կողմերինը (Մ.Ա.Годик, 2006): Ուստի ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացումը այն կարևոր խնդիրներից մեկն է, որը ֆուտբոլային թիմերի մարզիչներն ամեն օր փորձում են լուծել մարզումների ընթացքում:

Ֆիզիկական պատրաստվածության դրսևորումները բավականին շատ են: Դրանցից յուրաքանչյուրը պետք է մշակվի և կատարելագործվի յուրահատուկ և ոչ յուրահատուկ վարժությունների միջոցով: Մյուս կողմից, ֆիզիկական պատրաստությունը երկարաժամկետ մանկավարժական գործընթաց է, որի նպատակն է ֆուտբոլիստների բարձր ֆիզիկական պատրաստվածության մակարդակի ձեռքբերումը: Ընդհանրապես մարզիկների, այդ թվում նաև ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության գործընթացում լուծվող խնդիրները հիմնվում են ելակետային սկզբունքների կիրառման վրա՝ դրանց թվին են դասվում սպորտային պատրաստության սկզբունքները և օրինաչափությունները, մարզախաղերին բնորոշ սկզբունքները և, վերջապես, միմիայն ֆուտբոլին յուրահատուկ սկզբունքները:

Ավելին, այսօր ֆուտբոլային մրցապայքարի հաջողության հիմնական բաղադրիչ է հանդիսանում բարձր խաղային ակտիվությունը: Դա հատկապես սերտորեն է կապված խա-

ղացողների ֆիզիկական պատրաստվածության բավարար մակարդակի հետ (К.Гриндлер с соавт., 1976, W.Pzybylski, 1997, М.А.Годик, 2006, В.Пибыльски, З.Ястжембский, 2003):

Ընդգծենք և այն փաստը, որ ֆուտբոլում ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում օրգանիզմի ֆիզիկական աշխատունակության մակարդակը, ընդհանուր ֆիզիկական աշխատունակության մակարդակը սերտորեն փոխկապակցված է շարժողական ընդունակությունների ցուցանիշների հետ: Ուստի մասնագետներն առաջարկում են մանրակրկիտ ընտրել անհրաժեշտ մարզումային միջոցներ:

### ***1.3. Ֆուտբոլում ֆիզիկական պատրաստության ապահովման մեթոդական պայմանները***

Շարժողական ընդունակությունների տարիքային զարգացումը հավասարապես կախված է բնածին ընդունակություններից: Միաժամանակ անհատական զարգացման մեջ առաջատար է համարվում պայմանառեֆլեկտորային մեխանիզմը (В.С.Фарфель, 1975): Այս կառուցվածքը ապահովում է առանձին մարդու շարժողական գործունեության որակական առանձնահատկությունները:

Ինչ վերաբերում է կառուցվածքային մեխանիզմներին, որոնք ընկած են շարժողական ընդունակությունների մշակման հիմքում, ապա, ըստ մասնագետների տվյալների, այստեղ նկատվում է որոշակի հարմարվողականության վերակառուցումներ (А.С.Солодков, 2001, Н.А.Чарыева, 1986): Դրանց թվին են պատկանում նյարդամկանային ապարատի մորֆոլոգիական և ֆունկցիոնալ մասնագիտացումը, էներգաապահովման հզորության մեծացումը, օրգանիզմի ֆունկցիոնալ համակարգերի ընդլայնումը, աշխատունակության մակարդակի բարձրացումը:

Գիտական առկա տվյալները վկայում են մարգախաղերում արագաուժային պատրաստության մշակման և մեթոդիկայում գոյություն ունեցող երկու ուղղությունների մասին՝ աստիճանական և համալիր: Սա ինչ-որ չափով կարելի է վերագրել մնացած այլ շարժողական ընդունակությունների մշակմանը, խոսքը մասնավորապես վերաբերում է ֆիզիկական պատրաստության հետ շարժումների տեխնիկայի փոխադարձ կապին: Նման մոտեցումը ժամանակին անվանվել է «համակցված» ներգործման մեթոդ: Այս առումով նշվում է նման մոտեցման հեռանկարայնությունը, որը նախատեսում է տեխնիկական տարրերի և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի միաժամանակյա յուրացումն ու բարձրացումը: Խոսելով տեխնիկայի մասին՝ մասնագետները նկատի են ունենում գնդակով անմիջական աշխատանքը: Հետևաբար մրցումներում հաջող հանդես գալու համար ժամանակակից ֆուտբոլիստը պետք է ունենա կատարյալ տեխնիկա և ֆիզիկական պատրաստականության բարձր մակարդակ: Դա պահանջում է առաջատար շարժողական ընդունակությունների զարգացման օպտիմալ մակարդակ. արագաշարժություն, արագային դիմացկունություն, արագաուժային ընդունակություն, և մյուս կողմից՝ գնդակով տեխնիկական հնարքների արդյունավետ կատարում:

Ֆուտբոլիստի բազմամյա մարզման գործընթացում անհրաժեշտ է ապահովել տեխնիկայի և առանձին շարժողական ընդունակությունների զարգացման փոխադարձ կապը: Օրինակ ցույց է տրվել, որ մարզումների ընթացքում կայուն ձևով բարելավվում են ֆուտբոլիստների անհրաժեշտ շարժողական ընդունակությունները, իսկ տեխնիկայի արդյունքները մշտապես բարելավվում են:

Գնդակով աշխատանքի տեխնիկայի առանձին տարրերի փոխադարձ կապը տարբեր շարժողական ընդունա-

կությունների մշակման որոշակի մակարդակների հետ պայմանավորվում է դրանց մշակման անհավասարաչափությունամբ և անհամապատասխանությամբ: Ուստի նվաճումները, կապված ուժի, արագային և հատուկ դիմացկունության առավելագույն մշակման հետ, պահանջում են առավել երկար ժամանակահատված:

Այս առումով հասկանալի է, որ բոլոր շարժողական ընդունակությունների միաժամանակյա մշակումը, պետք է իրականացվի որոշակի համադրությամբ, որը պայմանավորված է պատանի ֆուտբոլիստների տարիքային առաձնահատկություններով և ֆիզիկական պատրաստականության մակարդակով: Մասնագետների կարծիքով շարժողական ընդունակությունների մշակմանն ուղղված կիրառվող օպտիմալ բեռնվածությունների հարաբերական խախտումը բերում է բացասական արդյունքների:

Հայտնի է նաև, որ արագաշարժության, ուժի, արագային դիմացկունության միաժամանակյա մշակումը, արագաշարժության մշակման գերակայության դեպքում առավել արդյունավետ է: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ արագաշարժության մշակման համար կիրառվող վարժություններն ազդում են աերոբ հնարավորությունների վրա, ինչը հանգեցնում է արագային դիմացկունության բարելավման: Նման վարժությունների կիրառումը նպաստում է նաև ֆուտբոլիստների ուժային ընդունակությունների մշակմանը:

Ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստությունը, հիմնված ընդհանուր լավ զարգացվածության վրա, իր առջև նպատակ է դնում գնդակով խաղային վարժությունների միջոցով տեխնիկապես զարգացնել խաղացողներին, գնդակով խաղը դարձնել ավելի արագ, մանևրային և շարժունակ: Այստեղ ֆուտբոլը դիտարկում ենք որպես տարբեր շարժումներից կազմված ամբողջական և միասնական մարզման ձև:

Դրա առանձնահատկությունն այն է, որ իր կազմում ընդգրկված շարժումները և այն տարատեսակ վարժությունները, որոնք օգտագործվում են խաղին նախապատրաստվելիս, միմյանց հետ մտնում են բարդ փոխներգործության մեջ, որի ընթացքում որևէ շարժման ձեռքբերման մակարդակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների մոտ որոշակի տեղաշարժերի:

Հատուկ ֆիզիկական պատրաստությունը կառուցվում է որոշակի մարզումային համալիր միջոցների օգտագործման հիման վրա: Նման շարժումները պետք է արտացոլեն խաղային գործունեության շարժողական ռեժիմը և առավելագույնս համապատասխանեն նրան ըստ առաջատար մկանախմբերի, առավելագույն դրսևորման ճիգերի աշխատանքային ռեժիմով:

Ֆուտբոլիստների խաղային գործունեության թույլ օղակների հիմնահարցերը սպորտային մարզման համակարգում հանդիսանում են առավել կարևորներից: Ուստի պատանի ֆուտբոլիստների հատուկ ֆիզիկական պատրաստության առավել կարևոր խնդիրներից է խաղային գործունեության թույլ օղակների հաղթահարումը:

Այստեղ մարզչին կօգնեն հատուկ ընտրված վարժությունները: Այդ պատճառով պատանի ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության համար գլխավորը պետք է լինի վարժությունների օպտիմալ հարաբերակցության որոնումը՝ առաջատար շարժողական ընդունակությունների նպատակաուղղված կատարելագործման համար:

Հատուկ վարժությունների ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել դրանց կառուցվածքադինամիկ և անատոմո-ֆիզիոլոգիական համապատասխանությունը:

Նրանց միասնությունը մասնագետները դիտում են որպես անցում մեկից դեպի մյուսը: Օրինակ՝ համարվում է, որ

պատանի ֆուտբոլիստների մարզումներում անհրաժեշտ է մշակել բոլոր շարժողական ընդունակությունները, բայց դրանց այնպիսի փոխադարձ կապով, որն անհրաժեշտ է դաշտում կոնկրետ տեխնիկական գործողության հաջող կատարման համար:

Հետևաբար՝ հակիրճ ներկայացված վերլուծության մեջ ակնառու են ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության իրականացման մեթոդական պայմանները և մոտեցումները: Դրանք պետք է ներառեն վարժությունների համալիր՝ առանց խաղային վարժությունների և վարժություններ գնդակով խաղային փոխգործողությունների ընթացքում: Նման բազմակողմանի մարզումը բացառում է միակողմանի ուսուցումն ու միանման, մոնոտոն վարժությունների կատարումը և հնարավորություն է տալիս առավել լայնորեն օգտագործել խաղացողների սեփական շարժողական հնարավորությունները խաղի ընթացքում:

Այսպիսով, պատանի ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության համակարգի ղեկավարման կատարելագործման մեթոդական մոտեցումների քննարկումը վկայում է բազմաթիվ չլուծված վիճելի հարցերի մասին: Դա վերաբերում է պատանի ֆուտբոլիստների առաջատար շարժողական ընդունակությունների բացահայտմանն ու դրանց առարկայական մշակման մանկավարժական պայմանների և մոտեցումների ստեղծմանը:

## ԳԼՈՒԽ 2 ՊԱՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԽՍՏՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### *2.1. Ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները*

Հայտնի է, որ մարզիկների ֆիզիկական վիճակի գնահատման հիմնական բաղադրիչներից է հանդիսանում նրանց ֆիզիկական զարգացումը: Այդ առումով մենք ուսումնասիրել ենք 11-17 տարեկան 288 պատանի ֆուտբոլիստների ֆիզիկական զարգացման հատկանիշները:

Ընտրվել է մարմնի հասակը, քաշը և թոքերի կենսական տարողությունը: Գիտական գրականության մեջ դրանք համարվում են որպես հենքային, հիմնական և առավել ընդունելի տարբեր սեռի և տարիքի մարդկանց մորֆոֆունկցիոնալ վիճակի գնահատման համար:

11-17 տարեկան պատանի ֆուտբոլիստների՝ նշված երեք հատկանիշների տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում: Արդյունքների վիճակագրական վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի շարք եզրակացություններ: Այսպես, օրինակ՝ ուսումնասիրվող տարիքային կտրվածքում դպրոցականների օնտոգենեզում մարմնի հասակը մեծանում է 35,8 սմ-ով, մարմնի քաշը՝ 31,7 կգ-ով, թոքերի կենսական տարողությունը՝ 656,7 սմ<sup>3</sup>: Մարմնի հասակի ցուցանիշը ավելի շատ մեծանում է 12-13 տարեկան երեխաների մոտ (19 սմ)՝ բավականին բարձր հավաստող մակարդակով ( $p > 1 0.1\%$ ), իսկ հետագայում տեղաշարժերը չնչին են (4-5 սմ) և ոչ հավաստող:

11-17 տարեկան պատանի մարզիկների մարմնի քաշի ցուցանիշները մեծանում են 21,8 կգ-ով: Տվյալ մորֆոլոգիական հատկանիշի աճի առավել մեծ տեմպեր նկատվում է 12-14 տարեկան երեխաների մոտ, հաջորդ տարիքային փուլում մարմնի քաշի տեմպերն աննշան է և փոփոխվում են ոչ հավաստի ( $p < 5\%$ ):

*Աղյուսակ 1*

**Պատանի ֆուտբոլիստներ ֆիզիկական  
զարգացման դինամիկան**

Տարիքը	Մարմնի հասակը (սմ)		Մարմնի քաշը (կգ)		ԹԿՏ (սմ <sup>3</sup> )	
	$\bar{x} \pm m$	p, %	$\bar{x} \pm m$	p, %	$\bar{x} \pm m$	p, %
11	141,6 ± 0,92	-	34,8 ± 1,2	-	1665,0 ± 34,2	-
12	146,3±1,3	> 1	38,1 ± 1,1	> 5	1704,2 ± 41,6	< 5
13	165,3 ± 1,5	> 0,1	53,9 ± 1,9	> 0,1	2064,3 ± 69,5	> 0,1
14	170,3 ± 1,2	> 5	59,9 ± 0,9	> 1	2081,3 ± 78,7	< 5
15	174,8 ± 0,79	< 5	60,9 ± 1,7	< 5	2237,5 ± 44,7	< 5
16	177,2 ± 0,83	< 5	64,0± 1,1	< 5	2290,0 ±100,1	< 5
17	177,4 ± 0,71	< 5	66,5 ± 1,7	< 5	2321,7 ± 82,1	< 5

Ինչ վերաբերում է պատանի ֆուտբոլիստների թոքերի կենսական տարողությանը, ապա և այստեղ բարձր ցուցանիշներ են գրանցվել 12-13 տարեկանների մոտ, երբ աճը գերազանցում է 360 սմ<sup>3</sup>-ով: 14-17 տարեկանների մոտ չնայած նկատվում է շնչառական ֆունկցիայի բարելավում, այնուհանդերձ այստեղ տեղաշարժերն աննշան են և էական չեն:

Ֆիզիկական զարգացման ցուցանիշների տարիքային փոփոխությունների արդյունքները վկայում են այն մասին, որ առաջին՝ պատանի ֆուտբոլիստների հիմնական մորֆոֆունկցիոնալ ցուցանիշները լավանում են 11-ից մինչև 17 տարեկանում: Սակայն տարբեր տարիքային փուլերում մարմնի հասակի և քաշի, թոքերի կենսական տարողության համար այն ընթանում է ոչ միանման և անհավասարաչափ: Սա արտացոլում է մարդու օրգան-համակարգերի զարգացման՝ գոյություն ունեցող մորֆոլոգիական և կենսաբանական օրինաչափությունները:

Եվ երկրորդ՝ ֆիզիկական զարգացման հատկանիշների առավել բարենպաստ տեղաշարժեր նկատվում են 12-14 տարեկանում, ինչն ունի մանկավարժական կարևոր նշանակություն:

## ***2.2. Ֆիզիկական պատրաստության մակարդակի գնահատումը***

Նույն տարիքի և քանակակազմի շրջանակում ուսումնասիրվել է նաև շարժողական պատրաստվածության մակարդակը: Ընդհանուր շարժողական կամ ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության մակարդակն ուսումնասիրվել է վազք 30մ (արագային ընդունակություններ), տեղից հեռացատկ (արագաուժային), վերցատկ (ցատկունակության), թե-

քում առաջ (ճկունության), մաքրքավազք 3x10մ (ճարակության) և վազք 6 ըոպե (դիմացկունության) ստուգողական վարժություններով (թեստերով): Այս նյութերից ստացված արդյունքների վիճակագրական վերլուծությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Այստեղ նույնպես, ինչպես և ֆիզիկական զարգացման ցուցանիշների դեպքում, նկատվում է պատանի ֆուտբոլիստների շարժողական ընդունակությունների նկատելի աճ: Այսպես, 11-ից մինչև 17 տարեկանում արագաշարժությունը բարելավվում է 1,38վրկ, արագաուժային ընդունակությունները՝ 57,7սմ, ցատկունակությունը՝ 23,5սմ, ճկունությունը՝ 12,5սմ, ճարակությունը՝ 0,84վրկ, իսկ դիմացկունությունը՝ 301մ:

Սա խոսում է այն մասին, որ շարժողական ընդունակություններն ենթարկվում են տարիքային փոփոխությունների օրինաչափություններին: Բայց, ինչպես հայտնի է, այս փոփոխությունները միանման չեն, անհամաչափ են և, տեղի է ունենում անհավասարաչափ, ինչը հանդիսանում է շարժողական ֆունկցիայի տարիքային զարգացման օրինաչափ երևույթ:

Պատանի ֆուտբոլիստների ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության տարիքային փոփոխությունները

Ձվմս	Արագաշարժություն, մ/վրկ					Արագաժամային, սմ					Ցատկունակություն, սմ					
	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %
11	5,84±0,08	0,48	-	-	170,79±2,44	14,23	-	-	34±0,29	1,69	-	-	39,95±,62	3,61	8,70	> 0,1
12	5,5±0,04	0,22	3,69	> 0,1	174,35±2,9	16,92	0,94	< 5	46,87±1	5,85	5,87	> 0,1	49,28±1,5	8,72	1,34	< 5
13	5,11±0,06	0,37	5,34	> 0,1	209,83±9,43	54,96	3,60	0,1	51,65±1,78	9,05	1,02	< 5	54,45±1,21	7,04	1,31	< 5
14	4,72±0,06	0,29	4,56	> 0,1	212±2,69	13,73	0,22	< 5	57,5±1,76	8,80	1,43	< 5	228,54±2,42	14,10	1,88	< 5
15	4,51±0,06	0,20	3,02	> 1	213,33±3,22	18,75	0,32	< 5								
16	4,51±0,03	0,16	0,07	< 5	218,38±4,83	24,13	0,87	< 5								
17	4,46±0,04	0,23	1,00	< 5												

**թիվ 2 աղյուսակի շարունակություն**

Ժամ	ձկունություն, սմ				ձարալություն, մ/վրկ				Դիմացկունություն, մ			
	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %
11	0,63±0,61	3,54	-	-	8,01±0,1	0,58	-	-	1263,15±4,88	28,46	-	-
12	3,13±1,09	5,44	2,01	5	7,71±0,07	0,43	2,36	> 5	1319,05±5,38	30,5	1,06	< 5
13	3,74±0,8	4,64	0,45	< 5	7,4±0,04	0,24	3,76	> 0,1	1380,35±13,23	67,46	1,13	< 5
14	6,47±1,04	6,05	2,09	> 5	7,3±0,05	0,25	1,55	< 5	1448,61±12,97	64,87	3,68	> 0,1
15	7,78±1,06	5,41	0,95	< 5	7,25±0,05	0,24	0,65	< 5	1483,55±16,14	94,10	1,69	< 5
16	9,8±0,95	5,56	1,34	< 5	7,23±0,03	0,2	0,43	< 5	1490,93±10,94	63,81	0,38	< 5
17	13,08±0,8	4,68	2,63	5	7,17±0,05	0,32	0,83	< 5	1564,25±17,+98	104,83	3,48	> 1

Այսպես օրինակ, 12-ից մինչև 13 տարեկանում ավելի շատ մեծանում են ճարպկության, ցատկունակության և արագաուժային ընդունակությունների ցուցանիշները (աղյուսակ 2): Նշված տարիքում տեղաշարժերն ավելի էական են, իսկ մնացած դեպքում՝ հակառակը: 11-ից մինչև 15 տարեկանում հավաստի  $p > 1 > 0,1\%$  նշանակության դեպքում լավանում են պատանի ֆուտբոլիստների արագային ընդունակությունները: Եվ, վերջապես, 13-ից մինչև 14 տարեկանում էապես բարելավվում են դիմացկունության ցուցանիշները:

Ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության մակարդակի վերլուծության հիման վրա պետք է նշել, որ 12-14 տարեկան հասակը հանդիսանում է նշված շարժողական ընդունակությունների առարկայական դաստիարակության մշակման առավել բարենպաստ ժամանակահատվածը:

Ինչ վերաբերում է հատուկ ֆիզիկական պատրաստվածության մակարդակի գնահատմանը, ապա, փորձարկվել են կոնկրետ ֆուտբոլային ուղղվածության մանկավարժական կոնկրետ թեստեր (աղյուսակ 3):

Հիմնվելով օրգանիզմի մորֆոֆունկցիոնալ զարգացման օրինաչափությունների վրա՝ օբյեկտիվ և բնական է համարվում 13-14 տարեկան ֆուտբոլիստների հատուկ ֆիզիկական պատրաստվածությունը: Այստեղ բավական է բերել կոնկրետ համեմատություններ: Այսպես օրինակ, արագային վարժությունները՝ գնդակով 30մ վարում, գնդակով և առանց գնդակի շրջանցել կանգնակները նույն տարածության մեջ: 11-ից մինչև 17 տարեկանում լավացել են հասնելով՝ 1.45վրկ, 1.55վրկ, 3.33վրկ: Միևնույն ժամանակահատվածում բարելավվել են ճարպկության ցուցանիշը՝ 5x30մ վազքում 6.79 վրկ-ով, 0.31 և 0.53 վրկ-ով աճել է 10մ վազքում, և միևնույն տարածության վազքում բարձր մեկնարկից:

Պատանհի ֆուտբոլիստների հատուկ ֆիզիկական պատրաստվածության տարիքային փոփոխությունները

Ձվմև	Վազբ գնդակով 30 մ/վրկ				Վազբ 30 մ/վրկ գնդակով շրջանցելով կանգնումները				Վազբ 30 մ/վրկ շրջանցելով կանգնումները			
	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %
11	6,08 ±0,06	0,33	-	-	12,25±0,21	1,23	-	-	6,65±0,05	0,31	-	-
12	5,82 ±0,08	0,44	2,75	1	10,53±0,17	0,96	6,43	> 0,1	6,13±0,08	0,47	5,35	> 0,1
13	5,11±0,06	0,37	7,19	>0,1	9,61±0,19	1,13	3,60	> 0,1	5,88±0,1	0,52	1,99	< 5
14	4,88 ±0,35	0,06	2,65	> 5	9,6±0,16	0,92	0,05	< 5	5,46±0,09	0,51	3,16	> 1
15	4,88 ±0,30	0,06	0,02	< 5	9,55±0,16	0,84	0,25	< 5	5,30±0,08	0,47	1,28	< 5
16	4,8 ±0,08	0,4	0,80	< 5	8,95±0,18	0,91	2,43	> 5	5,13±0,07	0,35	1,61	< 5
17	4,63 ±0,05	0,31	1,73	< 5	8,92±0,15	0,85	0,13	< 5	5,1±0,05	0,31	0,43	< 5

**թիվ 3 աղյուսակի շարունակություն**

ձվմուս	Վազբ գնդակով 5X 30 մ/վրկ մաքրցավազբ					Գնդակի նետում երկու ձեռքով, մ					Հարված գնդակին հեռավորության վրա, աջ ուղքով, մ				
	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %		$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %		$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	
11	37,42±0,5	2,93	-	-		10,34±0,17	1,01	-	-		18,97±0,76	4,44	-	-	
12	34,08±0,44	2,56	5,01	>0,1		11,18±0,33	1,92	2,25	> 5		19,87±1,83	10,68	0,45	< 5	
13	34,02±0,32	1,86	0,12	< 5		13,97±0,46	2,29	4,93	> 0,1		23,68±2,78	15,93	1,16	< 5	
14	31,45±0,24	1,22	6,45	>0,1		16,22±0,36	2,1	3,86	> 0,1		26,81±1,74	8,71	0,97	< 5	
15	31,40±0,45	2,23	0,09	< 5		16,36±0,39	1,98	0,27	< 5		33,13±1,49	8,66	2,76	1	
16	31,35±0,34	1,95	0,09	< 5		16,36±0,39	2,27	0,00	-		33,63±1,61	9,33	0,23	< 5	
17	30,63±0,49	2,86	1,22	< 5		17,21±0,28	1,64	1,76	< 5		35,29±1,08	5,51	0,86	< 5	

**թիվ 3 աղյուսակի շարունակություն**

Թիվ	Հարված գնդակին հետափորության վրա, ծախս ուղքով ս					Վազբ 10 մ/վրկ					Վազբ 10 մ/վրկ ընթացքից					Դիսպոսիցիոն/ միավոր				
	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %	$\bar{x} \pm m$	$\xi$	t	p, %
11	12,74±1,69	9,87	-	-	2,43±0,02	0,13	-	-	1,76±0,02	0,13	-	-	2,4±0,2	1,14	-	-	2,4±0,2	1,14	-	-
12	14,5±2,68	15,64	0,56	< 5	2,15±0,04	0,25	5,80	> 0,1	1,73±0,02	0,09	1,23	< 5	3±0,16	0,92	2,39	> 5	3±0,16	0,92	2,39	> 5
13	16,94±1,21	7,06	0,83	< 5	2,06±0,01	0,08	2,16	> 5	1,6±0,03	0,13	4,35	> 0,1	4,2±0,22	1,01	4,37	> 0,1	4,2±0,22	1,01	4,37	> 0,1
14	22,13±1,67	8,37	2,51	> 5	1,99±0,02	0,12	2,57	> 5	1,6±0,01	0,06	0,27	< 5	5±0,38	1,69	1,82	< 5	5±0,38	1,69	1,82	< 5
15	24,18±1,63	8,31	0,88	< 5	1,98±0,02	0,08	0,02	< 5	1,55±0,01	0,08	3,04	> 1	5,8±0,31	1,40	1,63	< 5	5,8±0,31	1,40	1,63	< 5
16	24,8±1,49	8,69	0,28	< 5	1,95±0,02	0,10	1,45	< 5	1,51±0,02	0,11	1,67	< 5	6,4±0,34	1,50	1,31	< 5	6,4±0,34	1,50	1,31	< 5
17	28,11±1,67	9,76	1,47	< 5	1,9±0,02	0,10	2,04	5	1,45±0,01	0,06	2,76	1	7,23±0,29	1,34	1,88	< 5	7,23±0,29	1,34	1,88	< 5

Նկատելի արդյունքներ են ստացվել նաև հատուկ տեխնիկական պատրաստության թեստերում: Օրինակ՝ յոթամյա տարիքային շրջաններում (11-17տ) 6.87մ-ով լավացել են գնդակի նետման արդյունքները, 16.32մ-ով՝ հեռավորության հարվածների ցուցանիշները և 4.8 միավորով՝ դեպի դարպասը կատարվող հարվածների ճշգրտության արդյունքները:

Սակայն այս ամենից բխում է, որ ստացված արդյունքները և արդյունքների դինամիկան ունի անհամաչափ և տարածամկետ բնույթ: Տարբերություններ են նկատվում նաև վիճակագրական ցուցանիշներում: Այդուսակ 3-ից երևում է, որ էական տարբերությունների բացակայության հետ մեկտեղ կան նաև հավաստող տեղաշարժեր  $p > 1 > 0,1\%$  նշանակության դեպքում:

Մինևույն ժամանակ, ընդհանրացնելով 11-17 տարեկան պատանի ֆուտբոլիստների հատուկ ֆիզիկական պատրաստության գնահատականի արդյունքների վերլուծությունը, հնարավորություն է ընձեռվում նշելու հետևյալ նկատառումները: Տարբեր թեստերում առանձնացվում են կոնկրետ տարիքային շրջաններ, որտեղ բացարձակ ցուցանիշները նկատելի բարձր են: Օրինակ՝ հատուկ պատրաստության թեստերում դա 11-13 և 13-14 տարեկանն է, ճարպկությունում՝ 11-12 և 12-13 տարեկանը, գնդակի նետման՝ 12-14տ, հարված գնդակին հեռավորության վրա՝ 12-13 և 14-15 տարեկանն է, և, վերջապես, դեպի դարպասը ճշգրիտ հարվածներում՝ 12-14 տարեկանը:

Այս տվյալները վկայում են, որ 12-14 տարեկանն առավել բարենպաստ է համարվում պատանի ֆուտբոլիստների հատուկ շարժողական ընդունակությունների մշակման համար:

### ԳԼՈՒԽ 3

## ՊԱՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԻՍՏՆԵՐԻ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈԴԵԼԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿՆԵՐԸ

Ազգաբնակչության տարբեր խմբերի ֆիզիկական դաստիարակության գործընթացի կառավարման օղակ է հանդիսանում գնահատման և մանկավարժական հսկողության համակարգը: Այս հարցը դարերի պատմություն ունի: Ուստի սովորող երիտասարդության ֆիզիկական վիճակի սահմանումն ու գնահատումը ֆիզիկական դաստիարակության գործընթացի կարևորագույն մասն է: Սակայն ֆիզիկական զարգացման ու շարժողական պատրաստվածության հսկողությունը և գնահատումը պետք է լինի անհատական, յուրաքանչյուր անձի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հարկ է նշել, որ գոյություն ունեցող գնահատման սանդղակների և ցուցանիշների մեծ մասը հավասարեցված են տարբեր սանդղակային գումարային շեղումներին, ինչի կապակցությամբ և առկա են ստանդարտային և կարգային տարբեր մակարդակներ: Մասնագետների մեծ մասի կարծիքով այդ շեղումները կարող են տատանվել 0.67-ից մինչև 1.5 սիգմա (Ֆ.Գ.Ղազարյան, 1981, Е.Я.Бондаревский, 1983.): Ընդ որում, տարբերվում են գնահատման հինգ մակարդակներ՝ բարձր (1.5  $\xi$  և բարձր), միջինից բարձր (0.67-ից մինչև + 1.5  $\xi$ ), միջին (0.67-ից մինչև + 0.67), միջինից ցածր (0.67-ից մինչև -1.5  $\xi$ ), ցածր (1.5  $\xi$  ցածր):

Այս մոտեցումները կիրառվել են համապատասխան հաշվարկներում, որի արդյունքները բերված են թիվ 4 աղյուսակում:

*Աղյուսակ 4*

**Պատանի ֆուտբոլիստների հատուկ ֆիզիկական պատրաստվածության մակարդակի գնահատման մոդելային սանդղակները**

**11 տարեկաններ**

Ցուցանիշներ	Բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Ցածր
<i>Վազք 30մ գնդակով շրջանցելով կանգնակները, վրկ</i>	10,3 և <	10,4-11,6	11,7-12 ,7	12,8-14	14,1 և >
<i>Վազք գնդակով 5X30 մ/վրկ, մաքրքավազք</i>	32,9 և <	33-37,1	37,2-37,6	37,7-41,7	41,8 և >
<i>Գնդակի նետում երկու ձեռքով, մ</i>	11,9 և >	11,8-11	10,9-9,7	9,6-8,8	8,7 և <
<i>Հարված գնդակին հեռավորության վրա, աջ ոտքով, մ</i>	25,6 և >	25,5-19,1	19- 8,8	18,7-12,3	12,2 և <
<i>Դիպուկություն, միավոր</i>	4,1 և >	4-3	2,9-1,8	1,7-0,7	0,6 և <

## 12 տարեկաններ

Ցուցանիշներ	Բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Ցածր
<i>Վազք 30մ գնդակով շրջանցելով կանգնակները, վրկ</i>	9 <	9,1-9,7	9,8-11,1	11,2-11,9	12 և >
<i>Վազք գնդակով 5X30 մ/վրկ, մաքրափազաք</i>	30,1 և <	30,2-33,7	33,8-34,2	34,3-37,8	37,9 և >
<i>Գնդակի նետում երկու ձեռքով, մ</i>	14,1 և >	14-11,5	11,4 -10,8	10,7-8,3	8,2 և <
<i>Հարված գնդակին հեռավորության վրա, աջ ոտքով, մ</i>	35,9 և >	35,8-19,9	19,8-19,8	19,7-3,8	3,7 և <
<i>Դիպուկություն, միավոր</i>	4,4 և >	4,3 -3,7	3,6-2,3	2,2-1,6	1,5 և <

## 13 տարեկաններ

Ցուցանիշներ	Բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Ցածր
<i>Վազք 30մ գնդակով շրջանցելով կանգնակները, վրկ</i>	7,8 և <	7,9-8,9	9 - 10,1	10,2-11,2	11,3 և >
<i>Վազք գնդակով 5X30 մ/վրկ, մաքրափազաք</i>	31,1 և <	31,2-33,6	33,7-34,3	34,4-36,7	36,8 և >
<i>Գնդակի նետում երկու ձեռքով, մ</i>	17,4 և >	17,3-14,3	14,2-13,7	13,6-10,5	10,4 և <
<i>Հարված գնդակին հեռավորության վրա, աջ ոտքով, մ</i>	47,6 և >	47,5-23,7	23,6-23,6	23,5-(0,2)	(-0,3) և <
<i>Դիպուկություն, միավոր</i>	5,7 և >	5,6-4,9	4,8-3,5	3,4-2,7	2,6 և <

## 14 տարեկաններ

Ցուցանիշներ	Բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Ցածր
<i>Վազք 30մ գնդակով շրջանցելով կանգնակները, վրկ</i>	8,1 և <	8,2-8,8	8,9-10,2	10,3-10,9	11 և >
<i>Վազք գնդակով 5X30 մ/վրկ, մաքրաձվազք</i>	29,5 և <	29,6-30,8	30,9 - 31,9	32-33,2	33,3 և >
<i>Գնդակի նետում երկու ձեռքով, մ</i>	19,4 և >	19,3-16,5	16,4 - 15,9	15,8-13,1	13 և <
<i>Հարված գնդակին հեռավորության վրա, աջ ոտքով, մ</i>	39,9 և >	39,8 - 26,9	26,8 - 26,7	26,6-13,7	13,6 և <
<i>Դիպուկություն, միավոր</i>	7,5 և >	7,4-5,4	5,5-4,6	4,5-2,5	2,4 և <

## 15 տարեկաններ

Ցուցանիշներ	Բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Ցածր
<i>Վազք 30մ գնդակով շրջանցելով կանգնակները, վրկ</i>	8,2 և <	8,3-8,6	8,7-10,2	10,3 -10,7	10,8 և >
<i>Վազք գնդակով 5X30 մ/վրկ, մաքրաձվազք</i>	28 և <	28,1-31	31,1-31,6	31,7-34,6	34,7 և >
<i>Գնդակի նետում երկու ձեռքով, մ</i>	19,3 և >	19,2-16,7	16,6-16	15,9-13,4	13,3 և <
<i>Հարված գնդակին հեռավորության վրա, աջ ոտքով, մ</i>	46,1 և >	46-33,2	33,1-33,1	33-20,1	20 և <
<i>Դիպուկություն, միավոր</i>	4,4 և >	4,3-3,7	3,6-2,3	2,2-1,6	1,5 և <

## 16 տարեկաններ

Ցուցանիշներ	Բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Ցածր
<i>Վազք 30մ գնդակով շրջանցելով կանգնակները, վրկ</i>	7,5 և <	7,6 - 8,1	8,2 - 9,6	9,7 - 10,2	10,3 և >
<i>Վազք գնդակով 5X30 մ/վրկ, մաքրքավազք</i>	28,3 և <	28,4 - 30,9	31 - 31,6	31,7 - 34,2	34,3 և >
<i>Գնդակի նետում երկու ձեռքով, մ</i>	19,8 և >	19,7 - 16,7	16,6 - 16,1	16 - 13	12,9 և <
<i>Հարված գնդակին հեռավորության վրա, աջ ուղքով, մ</i>	39,9 և >	39,8 - 26,9	26,8 - 26,7	26,6 - 13,7	13,6 և <
<i>Դիպուկություն, միավոր</i>	8,7 և >	8,6 - 6,8	6,7 - 6	5,9 - 4,1	4 և <

## 17 տարեկաններ

Ցուցանիշներ	Բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Ցածր
<i>Վազք 30մ գնդակով շրջանցելով կանգնակները, վրկ</i>	7,5 և <	7,6 - 8	8,1 - 9,6	9,7 - 10,1	10,2 և >
<i>Վազք գնդակով 5X30 մ/վրկ, մաքրքավազք</i>	26,2 և <	26,3 - 30,3	30,4 - 30,8	30,9 - 34,8	34,9 և >
<i>Գնդակի նետում երկու ձեռքով, մ</i>	19,7 և >	19,6 - 17,6	17,5 - 16,8	16,7 - 14,7	14,6 և <
<i>Հարված գնդակին հեռավորության վրա, աջ ուղքով, մ</i>	43,6 և >	43,5 - 35,4	35,3 - 35,2	35,1 - 27	26,9 և <
<i>Դիպուկություն, միավոր</i>	9,2 և >	9,1 - 7,7	7,6 - 6,7	6,6 - 5,2	5,1 և <

Այսպիսով, մշակված մոդելային սանդղակները մարզիչները կարող են օգտագործել ուսումնամարզական գործընթացում գնահատելու համար 11-17 տարեկան պատանի ֆուտբոլիստների հատուկ ֆիզիկական պատրաստվածության մակարդակը: Սանդղակները և ստացված արդյունքները, բնականաբար, կարող են օգնել մարզիկներին՝ հղկումներ ու շտկումներ կատարելու մարզական գործընթացի կառավարման գործում, դրանով իսկ կատարելագործել սպորտային վարպետության աստիճանը:

## ԳԼՈՒԽ 4


### ՊԱՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

#### *4.1. Պատանի ֆուտբոլիստների առաջատար շարժողական ընդունակությունները*

